

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ “ՆՈՐ ՕՐ”, Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ՔՂԹԱԿՈՒԹԻՒՆ

ՊԵՏՐ Ե ՈՂՂԱԿԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

Արտատու. Փ. ՄԻՒՆԻՍԻՈՒ:

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սեղանակալութիւն ԼՍԱՐԱՆ-ԲԵՐԵՑԱՍԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս	ԴՐՇ. ՈՂՋ
Գանձիւրի համար	Տարեկան, 50
»	» Վեցամսեայ 30
Շրջակայից	» Տարեկան, 60
»	» Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱԶՄԱՆԻ ՇԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՈՒՅԵ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ	
Տարեկան	Րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԵԿ Է
 ԵՒ ԲՊՂՂԱԿԱՆ ՓԱՐԱՅԸ
 Թերթին Վարչութեանը վրայ է:

ՀԵՌԱՊԻՐՆԵՐ

ԹԱՔՈՒ 1 Յուլիս. — Անդրկական պաշտօնատուներ յուսանատ կացութեան մէջ է:

Մովակայներն անկարելի կը գտնեն Բեքիւնի օգնութեան հասնելու եւ կը տարակուսին մինչեւ իսկ Թիւն-Ձինը պաշտպանելու:

ԲԱՐԻՁ 4 Յուլիս. — Թաքուէն կը հեռագրեն յուսնի 30ին. Բեքիւնի օտարականները, որոնց մէջ են Դեսպանները, պաշարման մէջ են:

ԼՈՆՏՐՈ 4 Յուլիս. — Զրոյց կը պարտի թէ երկու օտար պաշտօնատուներ դեռ կանգուն էին Յունիս 27ին. Կայսրն ու Կայսրուհին բանաստեղծութիւնները կը լսեն անհաշիւ, զորս Թուան իշխանն ու Պօքարները խիստ նկողմութեան տակ առած էին, եւ փողոցներուն մէջ ամենակատարեալ անիշխանութիւն կը տիրէր:

ՌԻՒԼԷԿԻՍՏԱԿԸ 4 Յուլիս. — Կիւտոս Կայսեր՝ Ձին զրկուող գնդերուն ուղղած հրաժեշտի ողջոյններուն ներկայ գտնուող անձանց պատմածին նայելով՝ Կայսրը չափազանց ուժգնութիւն մը ցոյց տուած է իր ճատին մէջ. երեք անգամ արտասանած է վրէժ բարը:

Դաշնակից գնդերուն գումարը, զորս կարելի պիտի ըլլայ կեդրոնացնել հիմա, 20,000ը չանցնիր:

Իրո Փոխարքան, աւելի կշիռ տալու համար իր խոստումներուն հանգէ պ Եւրոպացուց, գաղտնիցեցած է Եսնկ-Ձէյի բերդերուն սպառազինումն, ինչպէս նաև ուրիշ ուղղութիւն պատրաստութիւնները:

ԼՈՆՏՐՈ 4 Յուլիս. — Կը պատմուի թէ զօրավար Նիլէ Թիւն-Ձինի վրայ կը յարձակի 90000 մարտիկ: Օտարականները կ'սպաստանին իրենց նաւերուն մէջ, ուր Ձինական ուժերը զանոնք պիտի հայածնեն Երկաթուղին նորէն կարուցուալ Թիւն-Ձինի եւ Թաքուի միջև:

ԼՈՆՏՐՈ 5 Յուլիս. — Զօրավար Եսնկ թուակ կեդրոնացուցած է աճաքին բանակ մը:

Մինանի Դերմանացիներն իրենց ապահովութեան համար երկիւղ կը կրեն:

ԲԱՐԻՁ 5 Յուլիս. — Ոտիւր Տիվոն հասաւ, Բարիզէն անցնելով:

ԼՈՆՏՐՈ 6 Յուլիս. — Սորբերգարանին մէջ, Պ. Պրոտրիք ծանուցած է որ վարկեանէ վարկեան պատու խան մը կ'սպասէ ձարոնէն, Բեքիւնի օտարականներուն ազատութեանը մասին:

ՊԵՏՐ 5 Յուլիս. — Ապտոմարութիւնը Շիֆու կը ծառայի. Միւրաշեալ-Նահանգաց Մովակայը կը պատրաստուի Ամերիկեան հպատակները փոխադրելու ապահով տեղ մը:

ԲԱՐԻՁ 5 Յուլիս. — Զարոնը, Տէրո թեանց խնդրանքին վրայ օգնութեան բանակ մը պիտի զրկէ Բեքիւն:

ԼՔԵԱԼՆԵՐԸ

Հայ որբերուն վրայ Անաթօլ Թանսի յողուածին թարգմանութիւնը կարգացիք անշուշտ “Նոր Օր”ի վերջին երկու թիւերուն մէջ: Այդ գրուածին վրայ մեր կողմէն խօսք մ'աւելցնել կամ աւելի ազդու ոճ մը գործածելու նկրտիլ՝ յաւակնողութեան իբրև յետին ծայրը պիտի նկատուի անշուշտ:

Մենք անգիտակ չենք մեր անկարողութեան, եւ ի՞նչ կը յանդգնենք բառ մը գրել մեր որբերուն համար, զայդ կ'ընենք սա համոզումով որ գէթ մեր անզօր գրիչը միւսին, համբաւաւոր հրապարակագրին գրիչին փայլը եւ ուժը աւելցնելու պիտի ծառայէ իբրև սև շրջանակ օսկեղօծ պատկերի մը:

Պարտականութիւն մ'է սա զոր կը կատարենք եւ զոր պէտք է կատարէ ամեն մէկ Հայ անհատ առանց ընկրկելու իր մի որևէ անկարողութեան առջև, վասնզի ինչ որ ազգին է, իմն է, քուկդ է, անորն է, եւ ոչ ոք գծուարութեան մ'առջև տեղի կուտայ, երբ խնդիրը իր սեփականութեան շուրջը կը դառնայ: Այսպիսի պարագաներու մէջ գրչի համեստութիւնը կամ բացատրութեան անշքեղութիւնը չ'կըրնար կասեցնել զնա որ իրապէս կ'զգայ թըշուառութեան արտածմիլի կացութիւնը, կը բաւէ որ գրողը կամ խօսողը իր սրտին գրգռումով գրէ եւ խօսի: Ինչ որ սրտէն կը բղխի, եթէ ճիշդ չ'հասնիր իր նպատակակէտին, գէթ յատկութիւն ունի թմրածներն սթափեցնելու:

Յաւաքի է ըսել որ, ինչպէս ուրիշ մի քանի առաքինութիւնք, աղքատասիրութիւնն ալ անուամբ միայն կը փայլի մեր մէջ: Մինչդեռ օտարները մեր բազմազուրկ որբերուն օգնութեան փութալու կը միտին, մենք ձեռքերնիւ կ'սպասէ կը նստինք եւ կ'սպասենք: Սակայն եթէ կրօնասէր ենք, պէտք է նաև աղքատասէր ըլլանք. իսկ եթէ լոկ աշխարհային զգացում կը կրենք, դարձեալ մեր շահը կը պահանջէ որ աղքատասէր ըլլանք. նոյնը կը կրկնեմ, եթէ արծաթասէր կամ պատուասէր ենք: Վերջապէս ինչ որ ալ ըլլանք, մեր անհատական շահուն հակառակ է չբաւորներն անտես ընել: Պէտք է քաջ գիտնալ որ այսօրուան անօթին, հաւանականօրէն վաղը չարագործ պիտի ըլլայ, եւ մեր յօժարակամ չտուածը՝ ակամայ — եթերեւ աւելին — տալու վտանգին մէջ պիտի գրտնուինք:

Մի քանի անձնաւորութեանց կողմէ տրուած գումար մը, ներկայացման մը հասոյթը — եթէ ճիշդ նպատակակէտին գործածուելու ալ ըլլան — չեն կրնար սփոփել սովեալները: Հանգանակութիւնք — մանաւանդ այս տեսակները — հաւաքական եւ անընդմիջական ըլլալու են: Մեծ անձնաւորութիւն մը, հարուստ մը կուտայ կ'անցնի. իսկ փողովուրդը, լուսայատուն՝ կուտայ եւ կ'սպասէ աչքը տուածին վրայ յառած: Աւելըք է ըսել թէ մեծ տարբերութիւն կայ ողորմատու այս երկու գասակարգերուն մէջ: Մին կը մոռնայ, իսկ միւսը քայլ առ քայլ կը հետևի իր գրամին: Հոս լուսման է որ պիտի կատարէ առաջնակարգ դերը:

Ասկէ զատ եթէ մի քիչ խորհինք, պիտի տեսնենք որ մեծ անիրաւութիւն է միայն քա-

նի մը — ըլլան քանի մը հազար — անձանց վրայ ձգել ամբողջ ազգի մը անյաշուղ ձեռնարկին տուժումը: Այսօր գրեթէ սալայատակի վրայ մնացած քառասուն — յիսուն հազար անտիական որբեր ամբողջ ազգի մը զոհերն են: Հիմա կարելի է ըսող ըլլոյ — եւ ո'չ սակաւաթիւ — թէ ինք ոչ միայն սրեւէ կերպով չէ մասնակցած յիշատակական գործոյն, այլ նաև վասակ մ'ըլլալու հակառակած եւ այս աղէտներն ալ սկիզբէն մարգարէացած էր: Ընչդէ սոյս առարկութիւնը: Արդարև շատեր եւ շատեր նոյն գիրքը բռնած եւ նոյն հետեւութիւնը գուշակած էին: Բայց այդ պատճառարանոյնը՝ ընդհանրին ճշմարտախօս ըլլալու համար՝ պէտք է նաև խոստովանին որ — ձեռնարկին հաւանութիւն չտալով հանդերձ — մտադրեցին անկէ օգտուիլ՝ յստից պարագային: Այս երկրորդ կէտն ալ անուրանալի է որչափ առաջինը: Այո, մեզմէ իրաքանչիւր ոք — թերևս աննշան բացառութեամբ մը — կազմ եւ պատրաստ էր մեծ պատան իր անձին հանկու՝ եթէ գործը յաջողէր:

Սակայն մեր նպատակէն դուրս է անցեալին յիշատակն արթնցնել, ինչ որ եղաւ՝ եղաւ. աւնօգուտ է անոր վրայ ծանրանալ, եւ փաստակար ներկայն անտեսել:

Իրաւ է, բազդը կամ անհեռատեսութիւնը մեզ ծաղրեց, մեզ անբաւ փաստերու ենթարկեց. բայց մեր արգի անհոգութիւնը եթէ չարունակուի, աւելի աղետարեր պիտի ըլլայ: Ինչպէս ըսինք, բիւրաւոր եւ մանաւանդ մարգարէական ձեռք չկարկառենք անոնց, ուրիշները պատրաստ են զանոնք խնամելու, որդեգրելու՝ ի փաստ ազգութեան: Այն խեղճերն անգիտակից զոհերն են մեր քաղաքականութեան: Անոնց մէջէն քանիներ տակաւին լոյս տեսած չէին, երբ յիշատակական փողերու ձայնը կը լսուէին արտասահմանէն: Ո՞վ կրնայ ըսել թէ անոնցմէ քանի հազարները իրենց արիւնջուտ, խողիտուած մօրը ստեանց վրայ փակած մնացին օրերով: Քանի հազարները նորաբոյս ակուաներով՝ մեռած եւ թերևս նեխած մօր մը, հօր մը, եղբայրներու կամ քոյրերու միսերը անմեղօրէն չկրծեցին նօթութիւնէ . . .

Փութ ունենանք այն լքեալներու վրայ. ողորմինք այն անմեղ հրեշտակներուն, որոնք մէյմէկ չար սատանայ պիտի լոյսն եթէ չհսկենք անոնց վրայ: Մենք, կատարելութեան հասածներս, խոհուններս, յաւակնող գիւտնազէտներս, ըրինք զանոնք՝ ինչ որ են: տեղի շտանք որ իրենց տառապանաց հաշիւը պահանջեն ազգէն, պատասխանատուներ փնտռեն մեր մէջ: Ի մի բան, ի սէր մարդկութեան, ի սէր ազգութեան ողորմինք, ողորմինք այն խեղճ որբերուն, որոնք մեր մարմինն են, մեր արիւնն են, մահամերձ ազգի մը ապագայ սերունդն են:

Երբ այն սովամահ մանկիկները կը յօժա-

ՈՒՐ ԳԱՑԻՆ

Եւ գիշերայն նըստած առ զօրըս բօրողերուն, Գլխուն վերեւ ունենալով բարձրը, հեռուն, Անծայրածիր այն գորշ կապոյտ վերարկուն թաւ Զոր աստղերու բոցովն հինեց Աստուածն անբաւ, Անդունդներու կըրկին մէջ շտեղծ գոգցես բազմած, Մին անցելուն, միւսն ապառնոյն մեթ միգամած, կը հեծեծէր հայրենասէրն արտասուազին Մօր մը նման որ կուլայ մահն իր գաւակին.

« Ո՛վ մեր երկիր, ո՛վ երկիր սուրբ, հող պաշտելի, Ո՛վ պայլերու աստմներուն մատնեալ այրի, Անդրանիկներդ ո՛րք են Անծայր երկընքին տակ, Իրենց աչքերը փակեցին, յոքնավաստակ Զորերուդ մէջ հրեշտակի ձայնք սիրագորով կը թըռտէին, արձագանգէն թըրթըռալով: կը պըճէին քու գետակներդ մեղմանոսան Կանաչ լեռներդ, զերդ ժայպաւէն արծաթաման: Այլե՛ք՝ պատկեր, ուստի, նրսեմ, կը պողէին Անճուն կապոյտն ու ճաճանչներ, ստուերք երկնային Զովերուն մեղմ միմունչք, զուգեալ ընդ ջուրը կարկաջ, Խորին երկնից մէջ կ'երգէին թըռչնոց աւաչ: Եւ երկնի անձայն անմտունչ յակճիւս կային Բուրուճաւաւ ծաղիկներուն լոյս զարթումին: Եւ կ'որբէր կինն իւր նըւաղ երգ սիրասաց եղիւթեան մէջ անուշաճոտ սուրբ այլերաց: Որբանն աղուոր կը մըրմընջէր, նաւակ քընքուշ Տարու մերեալ յայիս սիւքին հող մեղմանուշ: Լեռներն, անձա՛ռ սեւիլ, յերկին կ'ամբարանային Շրլաչուճներն անհուն զարնան յաւէթային: Մամունն ըզլէ՛մ գերեզմանին կը փայտայէր, Զովը՛ ծառերն, եւ պերզակ երկին՝ ջուրեր: Համայնք անդորր, բնաւք սէր ու կեանք կը շընչէին. Սիրտեր խընդիւ կը տրոփէին ըզմայս պին: »

« Այժմի՛կ »

Արեւն, յախտնից ճեմոցն արթուն, Ցաւի անկզր կը սեւնէ մի բնակութիւն, Եւ իրեւ ճրագ ըստուերամած, առ կայծ ճիջոտ Դըրուած զաւկէ մը մահամերձ մօր սնարին մօտ, Դէտակն հայի սուգի մը վրայ անծայրափակ, Դե երկնային շուտ կը փակէ աչք վայրահակ: Հաւ կը նընջէ, անմտունչ է օդ, լոյս կը բըրջէ. Երբը, հարթած, այլ եւս բնաւին ճիկ հասած չէ: Մըտախորհ է անտանս. արդեօք կը յիշէ՞ դեռ: Կորագլուխ ծառը զոգ պիտի անկնի յերեւ: Ըստուերազանգ ժայռք կը թըլին սարսափահար: Արդեօք կըտտանք, տանջանք տեսան դիւանդնար: Արձագանգներ, երբեմն այնքան յաղցրահնչուն, Ոչ ինչ այժմիկ կը կրկնեն, բայց բուհ վայրկեւ Բնութիւն հիմայ հեծեծէ գազըն ողբմամբ: Ազուաւ հըսկայ, զէպ յաւերակս իջնէ մեթ ամպ. Եւ կարծես թէ շունչ կործանիչ, համայնաւեր Անցաւ ընդ այն, թողով մըշուշ մահահրաւէր: Ե. Ս.

բին, ինչպէս կը գրէ Պ. Անաթօլ Պրանս օր մը առանց կերակուրի անցընել, օրպէսզի աւելի խեղճերը կարող ըլլան գէթ օր մ'աւելի վայելել կենաց արեր. մենք՝ յափրացեալ չափահասներս՝ ինչե՞ր ընելու չենք անոնց այսքան վեմամագոյն մարդասիրութիւնը դոնէ գէշ ազէկ զուգակընելու համար: Մենք, քաղաքակիրթ եւ ազատ հողի վրայ ճախրողներս, այդ վայրենի եւ բարբարոս երկրի վրայ սողողացողներուն այն վե՛հ արարքին, այն անլուր անձնութեան օ՞րպիտի ախնով, օ՞րպիտի սրտաղեղունով պատասխանելու ենք:

Միայն անոնց լուսնայն պիտի փայլի աղբատաց գանձանակին մէջ. . . .

Ե՛րբ պիտի խորհինք հասկցնել ամբողջ աշխարհի թէ՛ Հայը որքան իւր անվեհերութեամբ նոյնքան նաեւ իւր եղբայրասիրութեամբ արժանի է տիեզերական յարգանաց եւ լուսագոյն վե՛հակի:

Այս ինքզրոյն մէջ նախաձեռնութիւնը ձերը պէտք է ըլլայ, գթաւոր տիկնայք, ազնուասիրտ օրիորդներ: Երբ կը կը գուրգուրաք ձեր փափկասուն զաւակներուն, եղբայրներուն սւ քոյրերուն վրայ, որոնք՝ յագեցած զանազան համագում կերակուրներէ, պտուղներէ, իրենց կատուներուն եւ շնիկներուն բերանը կը խոթեն ձեռքերին մնացած պիտիւնները, շօջանները, շարքանները. խորհեցէ՛ք որ անգին, արիւնի երկիրը, ձերիններուն տարեկից բերուոր անմեղներ հառաչելով եւ հեծեծելով կը նային ձեր սեղաններէն ինկած փշուրներուն: Մերկ են անոնք, անօթի են, օրը են, ոչ ոք ունին երկրի վրայ, բայց միայն Աստուած՝ յերկինս: Հասկըցուցէ՛ք ձեր հօր, ամուսնոյն, եղբօր, սիրելւոյն. հասկըցուցէ՛ք որ երբ ամեն օր սրճարաններու մէջ առ նուազն երկու գահեկան ծախսելու կարողութիւն ունին, կարողութիւն ունին նաեւ շարժութիւն փրանք մը յատկացնել այս ազգասիրական գործին:

Մի՛ առարկէք թէ սոցեղ սեւը ձեզի մտիկ չ'ըներ. դուք՝ եթէ ուզէք՝ լուսագոյն միջոցներ կը գտնէք ձեզի դերի ընելու այդ սեւը: Փորձեցէ՛ք եւ պիտի յաջողիք, եւ ահա՛ այն ատեն պիտի օրհնուիք եւ ձեր բնակարանները հրեշտակներով պիտի լեւան:

ՀԵՆՈՒԳԻՐ

Թիէն-Չին 5 Յուլիս. — Բէքինէ փախած երեք Զինացիներ կը պատմեն թէ՛ ըրոր օտարականները, թըռուով հազար, ապաստանած էին Բրիտանական զեսպանատունն ուր դիմադրեցին մինչեւ որ իրենց մթիւրը հատաւ: Այն ատեն Զինացի կրակի տոբն զեպանատունն ու բոլոր մէջը գտնուողները սպանուեցան:

Կը կարծուի թէ՛ Կայսրն ու Կայսրուհին թունաւորուած են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԿՆՈՐԱՐ

- Աստուան չ'ըբր ի՛նչ ուղեղը որ պատրաստէր:
- Միթէ ամեն օր կ'ըսէի ի՛նչ եւ իցէ քիչ մը պանիր հաց բեր, վասն զի իրիստ քաղցած եմ. երէկ իրիւղընէ ի վեր բերանս բան չ'իմ գրած:
- Եթէ Գառնիկին այս խօսքերուն Մարիամ ոչինչ կամ մի քիչ քաղցրութեամբ պատասխանէր, չարատէր ոգիները՝ յուսահատեալ խոյս պիտի աային, արծարծուելու վրայ եղող կտուր հուրը պիտի մարէր, այնքան անուկի աղետից առաջը անուտած պիտի ըլլար եւ այս պատմութեան գրուելուն հարկ չ'պիտի մնար: Բայց ո՛չ, « ինչո՞ւ վերջին խօսքը իմս չ'ըլլայ »:
- Գաւաթ մը պակաս խմելի եւ կերակուրի վրայ մտածելիք, գոչեց Մարիամ. շատ լաւ գիտէիք որ տան մէջ պատրաստ միս չունինք: Փոխանակ կնոջ ու գաւաակներուդ առողջութեան խորհելու՝ առատ ընէ մինչեւ կէս գիշեր բարեկամներուդ հետ գինեանէ գինետուն պտտէ՛, խմէ՛ Արդէն երէկ գիշեր, երբ Սահակ կուլաք, բու ըրած հարցումէդ եւ վերջն ալ գիշերով ելլել երթալէդ հասկցայ որ վարմունքդ փոխած էս: Ինչո՞ւ եկար, թո՛ղ լաւ ուտէիք, ետքը գայիք. մենք հոս ի՛նչ

ՊԱՏՃԱՍՔ ԿՈՐՄԱՆՄԱՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆ

Անցեալ շաբաթ կատարուեցան Ազգ. Վարժարանի երկուսն աշակերտաց տարեկան հարցաքննութիւնները, որոնց վրայ յառաջիկային պիտի գրենք: Աշակերտուհի մը, Օր. Հայկանոյ Տ. Անդրէասեան, յաջողակ՝ ուսմանց գրեթէ բոլոր աւարկաներուն մէջ, նախասիրութեամբ ուսած է Ազգ. Պատմութիւնն իբրև էական եւ նուիրական ուսում՝ ամեն ճշմարիտ հայ ազգիկան համար: Հետեւեալ յօդուածը՝ յիշեալ աշակերտուհիին առաջարկուած գրաւոր քննութեան նիւթն է, զոր հաճոյքով կը հրատարակենք ի քաջալերութիւն:

Ռուբինեան հարստութեան կործանման պատճառներն կարող ենք այսպէս չորս գլխաւոր կէտերու մէջ ամփոփել:

Ա.) Կոստանդին Ա. ի օրով Կիլիկիոյ Հայք սկսան ուղղակի յարաբերութիւն ունենալ Արեւմտեան ազգաց հետ, որք նոյն ժամանակէն սկսեալ բազմութեամբ դիմեցին Արեւելք, Սուրբ-Երկիրն Մահմեդականաց ձեռքէն ազատելու համար: Այս յարաբերութիւններն որչափ որ ի սկզբան նպաստաւոր եղան Ռուբինեան իշխանութեան հաստատութեան եւ ընդարձակութեան համար, այնչափ եւս վերջերս վնասակար եւ աղետաբեր եղան. որովհետեւ Կոստանդին Ա. դաշն կապեց Թաշակըաց հետ եւ օգնեց անոնց բացարձակապէս, ինչ որ մեծ անխոնձութիւն էր, ճամբայ ցոյց տալով եւ Անտիոքի պաշարման ժամանակ առատ պաշար եւ զօրք իսկ զրկելով Օշին, Կոստանդին եւ Ապիրաս հայ իշխանաց ձեռամբ:

Այսպէս Կոստանդին Ա. Մահմեդականաց վրէժը զըրգոնց Հայոց դէմ:

Բ.) Գերմանիոյ Յրէտէրիկ շիկամօրուս կայսրն իմանալով որ Սալահատին, Եգիպտոսի սուլթանը Երուսաղէմը նուաճեր է, նոր Խաչակրութեան մը գլուխն անցնելով Արեւելք եկաւ Երուսաղէմն ազատելու համար: Լեւոն Բ. անոր պաշար եւ զատ զօրք զրկեց եւ Շիկամօրուսը յայտնեց Լեւոնի որ եթէ իրեն օգնէ, փոխարէն թագաւորական թագ պիտի ստանայ: Շիկամօրուսը խեղճուեցաւ զժողովաբար Կալիկազոս գետին մէջ ի Կիլիկիա, առանց կատարելու իր խոստումն: Իւր որդին Հէնրի Զ. իւր հօրը գահը բարձրանալով՝ Լեւոն Բ. ին փառաւոր թագ մը զրկեց Կեղեւստինոս Պապին խորհրդով եւ Կոնստանտնոպոլիսէն ձեռամբ: Այնուհետեւ Լեւոն Բ. եւ իւր յաջորդներն ինամութիւն հաստատեցին Լատինաց հետ, ինչպէս Հունգարիոյ, Կիպրոսի եւ Անտիոքի Արքեպիսկոպոսի հետ: Ուրեմն սերտ յարաբերութիւն հաստատուեցաւ Հայոց եւ Արեւմտեան ազգաց մէջ: Այս մերձաւորութիւններն առիթ բռնելով՝ Պապերը սկսան թղթակցել Հայոց Թագաւորաց եւ Կաթողիկոսաց հետ Կրօնական միութիւն մը հաստատելու յուսով: Թէպէտ անոնց բոլոր ջանքն ապարդիւն մնաց, բայց վերջերս մահաւանդ՝ սղիտաբեր եղաւ. Հայոց, նոր նոր գծաութեան եւ երկպառակութեան որոմներ ցանկելով անոնց մէջ, քանի որ Պապերն նոյն յուսով Ունիթօր

որ այտին վրայ ստակալի թամբ մ'իկնու, եւ զայն դեպի տապալեց:

Չկնորսը ապտակած էր իր սիրելի կինը, որու համար սակայն՝ կեանքը տալու պա որաստ էր:

Նոյն միջոցին պղտիկներն ալ արթնցան եւ տեսնելով իրենց հայրը որ շիփիտակ եւ սպառնալից կը կենար գլխուն վերեւ իրենց մօր, որ գետին տարածուած էր եւ կը հեծկտար, անարեկեցան եւ սկսան լալ:

Եզրակացնելու համար ըսենք թէ այն գիշեր առաջին անգամն ըլլալով՝ երկու ամուսիններուն անկողինները զատուեցան:

Գառնիկ պակկեցաւ նօթի, գինով, բայց ըրածին վրայ զղջացած:

Մարիամ երկնցաւ իր գաւակաց քով՝ միշտ հետաքրքրութեամբ սողորուած թէ արդեօք ամուսինը առտուն կանուխ ո՛ւր գնաց եւ ինչո՞ւ գինով ետ զարձաւ:

2.

Առանց բարոյականի ապականութեան խնդիրը մէջ խառնելու, կրնանք ըսել թէ՛ ընտանեկան խռովութեանց հարիւրին իննսունին սկզբնապատճառը՝ վեր պատմուած փուճուճութեանն անցին չ'անցնիր: Շատ անգամ կեանքը աղատելու աշխատող թոնջիկ մը, ոստայնի մէջ ինկած ճանձ մը, հատիկ մը տանող մըջիւն մը՝ բնատանիքներու կործանման կամ գէթ ներդաշնակութեան խանգարման անմեղ հեղինակները կ'ըլլան:

Կ'ըլլանք. քու հո՞գդ է: Բայց մի՛ կարծիր թէ կրնաս զիս խաբել, եւ քեզմէ աղէկ գիտեմ ո՛ւր երթալդ, ո՛ւր կէ գալդ: Ա՛հ, Աստուած, ի՛նչպէս եղաւ. որ ասանկ մարդու մը ձեռքն ինկայ. հոյիս կ'ըլլար՝ ազատելի. եւ ին. եւ ին:

Անթատելի է որ երբ կին մը իր ամուսինը անիրաւ հանելու գիտաւորութեամբ լեզու խաղցնելու սկսի, ա՛լ անկարելի է որ կենայ. թելի կծիկ մ'է որ՝ առանց ուղղութիւն մը պահելու՝ կը քակուի անկերպանալի կերպով, առտ անդ թաւալելով: Այն միջոցին մարդոց միայն երկու ձամբայ կը մնայ. կա՛մ իրենք զիրենք յանկարծ խուլցնել՝ ինչ որ շատ դիւրին չէ. եւ կա՛մ իր կողակցին լեզուին յոգնելուն չ'ապաստելով՝ ելլել երթալու քիչ մը ժամանակ անէն զորս մնալ: Վերջին միջոցը լաւագոյնն է, բայց գործադրութեան համար պէտք է պաղարիւնութիւն՝ տեսակ մը առաքինութիւն ըսա պարագային՝ որմէ այն պահուն բողբոլին զուրկ էր Գառնիկ:

Արդարեւ ձկնորսը հիմայ կատարելապէս գինովցած էր. կնոջն յանիրաւի կշտամբանքները եւ խնդ ու խելար խօսքերը՝ խմած օղիին քառապատիկ աղբեղութիւնը բրած էին անոր վրայ:

- Ուստի՛ աչքերը տաքցած՝ ոտք կ'լաւ եւ
- Լո՛ւ, գոչեց:
- Չպիտի լուսն:
- Չպիտի՛ լուսն:
- Ո՛չ:
- Ս արիամ հագիւ այս « ոչ » բառը արտասանած էր

անուամբ Միտրաբաց կարգն հաստատեցին ի Հայոս եւ ի Կիլիկիա : Ունիթօրք՝ Լատինականութիւն : քարոզեցին բացարձակապէս Հայոց : Ռուբենեան վերջին մի քանի Լատինացեալ թագաւորաց կողմանէ պաշտպանութիւն գտան : մինչեւ իսկ այս վերջինք՝ Հայ եկեղեցոյն մէջ մտցուցին մի քանի Լատինական ծէսեր եւ արարողութիւններ ի փոխարէն Արեւմտեան՝ ազգայնօրէնութիւնն յուսալով զիրենք շրջապատող թշնամեաց դէմ : որով Հայոց դէմ թշնամեաց զայրոյթը ցրդեցին եւ թշնամիք փութացին որ առաջ կործանել Կիլիկիոյ իշխանութիւնն, որպէսզի Արեւմտեան ազգերն առիթ չ'ունենան Արեւելեան գործոց միջամտելու :

Գ.) Ներքին երկպառակութեան ոգին, իբր եկամուտ մի ախտ, անպակաս էր Հայոց մէջ, անձնասէր եւ փառասէր ինչամաները յաճախ կը ձգտէին տնկախութեան եւ կամ թագաւորութեան, որով ստէպ քաղաքային պատերազմաց սեղի կուտային եւ կամ օրինաւոր գահաժողովներն զէմ կը դաւադրէին : Ինչպէս՝ Լեւոն Գ. ի օրով, մինչդեռ պարտաւոր էին երկրին ներքին զարգացման հոգ տանելու, միահամուռ զինուելով արտաքին թշնամեաց դէմ Ուրեմի թշնամիք տկար եւ անպաշտպան դանելով Կիլիկիան, կը միջամտէին երկրին ներքին գործերուն եւ ամեն ինչ ի նպաստ իրենց կարգապահութիւնը կը ջանային մի օր իսպառ ջնջելու Կիլիկիոյ Հայոց իշխանութիւնն :

Դ. Կիլիկիոյ վաճառականութիւնն սերտիւ կապուած էր արեւմտեան ազգաց վաճառականութեան հետ Լեւոն Բ. ինչպէս իւր յաջորդներն, մեծամեծ զիւրութիւններ եւ արտօնութիւններն շնորհեցին Սուրբիոյ վաճառաչան ազգերուն՝ զիստարարք Իտալացի երկու հասարակապետութեանց, Վենետիկացոց եւ ձեռնովագոց : Այդ վաճառականութեանց շնորհիւ Կիլիկիա խիստ ծաղկեցաւ, հարստացաւ եւ մանաւանդ Այսոս նաւահանգիստը հրաշակաւոր եղաւ : այնպէս որ Հայոց թշնամեաց նախանձն շարժեցաւ, մանաւանդ եգիպտացոց՝ որք ուղեցին վերջին հարուածն տալ զժողովրդ Կիլիկիոյ, որպէս զի այն հարստութեանց իրենք տիրանան եւ թէ արեւմտեան ազգերն առիթ չ'ունենան Արեւելք գալ եւ հեղինակել իրենց երկիրներուն տիրանալու : Հետեւարար Մէլիք-էլ-էշրէֆ Շապան եգիպտացոց Սուլթանը՝ Անձէտ եղբորն առաջնորդութեամբ անպակաս բանակ մը զրկեց Կիլիկիա, զոր նուաճեց 1375 ին, ամեն կողմ պաշտպան զօրք դրաւ եւ կուսակալներ կարգեց եւ Լեւոն Զ. Լուսինեան տարաբախտ թագաւորն Հայոց՝ ընտանեօր գերի բերուեցաւ յեգիպտոս :

ՀԱՅԿԱՆՈՅԾ Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ Աշակերտուհի

Ազգ. Գալստ. Աղջ. վարժարանի Ե. Կարգի Գահիրէ 4 յուլիս 1900

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՄԵՌԵԱՆ ԻՐՈՎ ՄԸ. — Նոր աղի լիճ մը գտնուեցաւ երկրագնդին երեսը, Պարսկաստանի հիւսիսակողմն ու կը տարածուի 800 քառ. մղոնի վրայ : գրեթէ 9 մ. 30 խորութիւն ունի : մեծագոյն լայնութիւնն է 30 քիւմէթր եւ մեծագոյն

Այսպէս ամենաչնչին պատճառ մը խիստ անակնկալ եւ անգին արգիւնքներու ծնունդ կուտայ Միթէ Վօլթէն՝ իւր քմայասէր մտքով՝ Գաղղիոյ Հէնրի Գ. թագաւորին մահուան պատճառը արարելն մէջ չի՝ փնտոր ձեռքկատան ընկող պրահմանի մը, որ՝ հակասակ իր սովորութեան՝ առաւօտ մը նախ ձախ օտորը առաջ նետելով անին գուրս կ'ելլէ :

Մարդ ինչպէր չկրնար զսպել այսպիսի արտաոց գաղափարներու առջեւ, բայց միւս կողմէն ալ կը խոստովանի որ արգարեւ կայ մի զօրութիւն որ կ'ազգէ մեր վրայ, եւ զմեզ կը զրգէ կարեւորութիւն տալու անշուճարելի եւ ամենահասարակ իրերու, կարեւորութիւն որ մեր առջեւ կը բանայ դժբաղդութեան կամ երջանկութեան մեծ գուրու : Ճակատադիր Բայց նա ալ միշտ ընդունուած չ'է ոչ նուազ հարկաւոր իմաստասէրներէն, որոնց մէջ ըստդներ կան թէ «մարդս ինք իր ձեռքովը կը պատրաստէ իր ճակատագիրը» : Գիպուած ուրեմն :

Ինչ որ ալ ըլլայ, սա կայ որ մենք մեծ պէտք ունինք ընտանեկան խնդրոց վերաբերեալ գասեր առնելու Ընտանեկան կեանքի խնդիրը մարդկային երջանկութեան համար այն ան կարեւոր եւ միանգամայն այնքան զօրաւոր ըլլալու է որ՝ Վ. Հիւլիօ սա անհաւատալի կարծիքը կը յայտնէ :

«Ընտանիք մը կառավարել գիտողը արժանի է ազգ մը կառավարելու» :

Հաւատարիմ մնալով հանդերձ մեր սկզբունքին, այն

երկայնութիւնը՝ 144 քիւմէթր : Իր ջուրերը զգալապէս տակի աղի են քան Մեռեալ ծովուն ջուրերը, որոնք մինչեւ ցարդ իբրեւ ամենաշատ առօրինի գրորի նիւթ պարունակող ճանչցուած էին :

Այս լիճը գեշ վերջերս գտնուեցաւ անգլիացի երկրախոյզներէն, իրենց ճամբորդութեան միջոցին ի Պարսկաստան :

ՀԱՄԲՈՒՅՐԻ ՄԸ ԳԻՆԸ. — Լիքի գատարանը (Արեւելեան Բրուսիա) պիտի տեսնէ մտերու եզական գատ մը : Մանկամարդ օրիորդ մը կը պահանջէ 1500 մարք, զին համարյոյրն զոր ընդունած էր 4 տարի առաջ, իր ամբաստանած մարդէն :

Այս մարդը պանդոկի մը մէջ կը գտնուէր քանի մը բարեկամներու հետ, երբ 16 տարեկան երիտասարդուհի մը մտաւ հասարակաց սրահը : Մարդն ըսաւ աղջկան. « Գեղուհի՛ս, կուղէ՞ք ինձի տալ համբոյր մը : » Երիտասարդուհին մերժեց : Վերաւորուած, մարդը յայտարարեց որ եթէ գեղուհին համբոյր մը տար իրեն, 1500 մարք պիտի վճարէր երբ աղջիկը 20 տարեկան ըլլար : Օրիորդը հաւանեցաւ, համբոյրը տրուեցաւ, կամ աւելի ճիշդը, ծախուեցաւ : Համբուրովաճառն այսօր իր ստակը կը պահանջէ :

Տեսնենք հիմայ թէ՛ Լիքի գատարանը՝ ապրանք պիտի նկատե՞ համբոյր մը :

ՄՈՒՀԱՄՄԵՏ ԲԱԹՊ ԲԱՇԱ, Բիրէպի մաքրանոցին մէջ մեռաւ : 35 տարեկան էր, որդի հանգուցեալ Իսմայիլ բաշայի եւ թոռն էլ Սալիս Ապու Պաքր Բաթիպ բաշայի : Մարմինը զմուտեցրով փոխադրուեցաւ ի Կ. Պոլիս :

ՀՐԻԷՀ. — Ամուսն Յին, հինգաբարձի, կէս օրէն վերջը, Համգաւորի մէջ ծագած հրդէհը տակեց մինչեւ գիշեր : Կրակը Տարպ-Սասաույէն բռնկած էր Մուհամմէտ էֆ. Ապու Պաքրի մրթերանոցներուն մէջէն : 1000 ոսկիի քիսա կը հաշուեն :

ԱՐԿԱՄ. — Տարպ էլ նուպիթի թաղին մէջ տեղացի աղջիկ մը, տան մը տանիքէն վար ինկաւ : խիստ ծանր վիճակի մէջ հիւանդանոց փոխադրուեցաւ :

ՅՈՒԼԻՍ 14ի ՏՕՆԸ. — Դահիրէի ֆրանսական գաղթականութիւնը Յուլիս 14ի տօնախմբութիւնը պիտի կատարէ այս տարի Փարիզի Յուցահանդէսի Եգիպտական բաժնին, Թրօքատէրոյի մէջ :

ԵՐԿԱՄՈՒՂԻ. — Եգիպտական երկաթուղեաց վարչութիւնը մտադիր է նոր գիծ մ'աւելցընելու Բօր-Մայիտի եւ Իսմայիլիէի միջեւ :

ԺԱՆՏԱՍԵՏԸ. — Պաշտօնական վիճակացոյցը՝ Բօր-Մայիտի եւ Աղեքսանդրիոյ համար դէպք մը չ'նշանակեր վերջերս :

Է՛ երկէք իբրեւ պատգամ չ'ընդունիլ մարդկային առաջադրութիւն մը : որպիսի անվիճելի արժանեաց տէր ալ ըլլայ հեղինակը, մեծանամբաւ բանաստեղծին այդ առաջադրութեան մէջ անկարելի է չտեսնել մեծ ճշմարտութիւն մը՝ թերեւս մի քիչ չափազանցեալ, յենցով սա հիման վրայ թէ արգարեւ ընտանիք մը ոչ ալ ինչ է, բայց միայն սակաւանդամ ազգ մը :

Բայց ինչպէս կառավարելու է ընտանիք մը : Հաւանօրէն այնպէս ինչպէս կը կառավարեն ազգ մը : Կանխամտածութեամբ, հեռատեսութեամբ, աշխրջութեամբ, հաւանական թշնամեաց ճանրուն վրայ բարոյական պարիսպներ կառուցանելով, բարի զգացմանց ուղին հարթելով, հաշուեցուցակը կազմադրելով, պատուոյն անաղարտութեան մեծ հոգ տանելով, անգամներուն կրթութեան եւ բարոյապէս զարգացման ջանալով, ամեն մէկուն իր պարտքը ճանչցնելով, եւ այդ պարտուց անթերի կատարման հսկելով, պատժելով եւ վարձատրելով, զիջումով ու անդրուելիութեամբ, փոխադարձ ներողամտութեամբ եւ երբեմն ալ անտեսութեամբ :

Ընտանեաց վեհապետին՝ առն, եւ անոր երկրորդ անձնաւորութեան՝ կնոջ բոլոր զիւանագիտութիւնն ու գաղաքագիտութիւնը առ միմանս եւ առ միւս անդամ՝ զաւակներն ու ծառաները, պէտք է ամփոփուին մանաւանդ ներողամտութեան շէք երջանիկ ընտանիք :

.....

ԳԼԽԱՏՈՒՄ. — Սայտա Զէյնապի մէջ ազախին մ'սպաննող Ալի Ահմէտի մահաւճիւրը պիտի գործադրուի ամսոյս 10ին, երեքշաբթի առաւօտեան ժամի 6 ի միջոցները, Պապ-էլ-Խալիֆ հրապարակը, կառավարական պաշտօնատան գիւմացը :

Պատ. Վարչութիւն «Նոր Օր»ի

Անցեալ կիրակի Յուլիս 1ին տեղի ունենալիք Ընդհ. Ժողովը, անգամաց մեծամասնութիւն չ'գոյանալուն պատճառաւ յետաձգուեցաւ :

Ուստի կուգանք արդոյ ընկերաց ծանուցանել որ վաղը, կիրակի, Յուլիս 8, առաւօտեան ժամը 10ին, Ազգ. Մանկապարտիզին սրահը տեղի պիտի ունենայ յետաձգեալ Ընդհ. Ժողովոյ գումարուը, ներկայից թիւն օրինաւոր նկատուելով :

Ի դիմաց Մայր Գիւանի

Ազգատաննամ ընկերութեան Ատենապետ Ս. ՊԻԼՊԻԻԼԵԱՆ

7/7/1900

Պատ. Վարչութիւն «Նոր Օր»ի

Հաճեցէք հրատարակել Զեր . . . թերթին մէջ սոյն երկտողն առ ՚ի լուսաբանութիւն թիւրիմացութեան մը :

«Նոր Օր» ի առաջին թիւին մէջ «Եգիպտական ընկերութիւններ» խորագրով յօդուածին հետեւալ տողերը՝ Ընկերութեանն ուղբ գրուած են. «Վասպուրականի եւ Արարիկի Որբախնամներէն յետոյ կուգայ Ակնայ փոքրաթիւ, բայց եռանդուն հայրենակիցներու ընկերութիւնը որ հիմնարկութեան օրէն ի վեր մասնաձեւը հոչակած է զինք Ակնայ կեդրոնական Որբախնամին որ Աղէքսանդրիա կազմուած է » :

Արդ, վերոյիշեալ յայտարարութիւնը թիւրիմացութեան արդիւնք ըլլալով, ներկայիս կը փութանք յայտարարել թէ՛ Գահիրէի Ակնայ Որբախնամ Ընկերութիւնն ս'չ ինքզինք Աղէքսանդրիոյ Որբախնամին մասնաձեւը հոչակած է, եւ ո'չ ու է կապակցութիւն ունեցած է ցարդանոր հետ :

Ընդունեցէք մեր յարգանայն հաւատարմը Ի դիմաց Գործ. Ժողովոյ Ակնայ Որբախնամ Ընկերութեան Ատենապետ Ս. Պ. ՓԼՓԼՁԵԱՆ Ա. ԼՊԿԻՃԵԱՆ Ս. Գ. ՓԼՓԼՁԵԱՆ 29 Յունիս 1900 Գահիրէ

Մարդիկ ընդհանրապէս չեն բարձր որ երկրիս վրայ չիկայ բացարձակապէս կատարեալ էակ մը : Ամենին իմաստունը ինչպէս ամենին տղէքը, հօրագոյնն ինչպէս տկարագոյնը անպատճառ մէկն ուրիշ պակասութիւններ ունի, մին տեսակ մը, միւսը մի ուրիշ տեսակ : Ուստի իմարութիւն է զգարել՝ զիմացինի վրայ տեսնելով թերութիւն մը զոր դու չ'ունիս, եւ որու փոխարէն դու ուրի մը ունիս, զոր զիմացինը չ'ունիս իթէ պակասութիւններէ զերծ ես՝ որքան որ կարելի է ըլլալ, աւելի լաւ քեզի համար : Իրաւունք կ'ունենաս ինքզինքդ իբրեւ սարօրէն առանձնաչնչեալ նկատելու, բայց անիրաւութիւն կ'ընես եթէ զիմացինի բարկանաս տեսնելով թէ նա զուրկ է այդ անտեսութիւնէ : Այս պարագայի մէջ սրտնեղիլ՝ սպառնայ մ'է թէ զուրկ ես այն յատկութիւններէ զոր կը կարծես ունենար կատարելութիւնը կը կայանայ չէ՛ թէ բարկանալու, այլ խրատելու, համբերելու եւ սոկալու մէջ :

Կինը՝ որուն ինամոց յանձնուած են սուրն ու մանուկները, կրնայ երբեմն խոտու դէմքով ընդունիլ այրը, որ միշտ զուրան ըլլալով չ'իմար գիտնալ թէ ինչ կ'անցնի տան մէջ : Այն առնես առն պարտականութիւն է ներողամտ ըլլալ, եւ իր կողակցին կարեկցել :

Նմանապէս այրը որ իր գործերուն բերամբ հազար ու մէկ անձանց հետ կը տեսնուի, կը հարկադրուի երբեմն ուշանալ, եւ մինչեւ անպատճառ — եթէ զուրկ է անձնապատուութիւնէ — խմած գամայ տունը, սրտնեղած, մտազբաղ ըլլալ : Հիմայ ալ կնոջ նախապէս պարտականութիւնն է փայփայել ջրիկը, առանց սակայն ձանձրացուցիլ ըլլալու :

(Շարունակելի)

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԳՈՐԾԻ ԺՈՂՈՎՈՅ

ՄԷԿ ՆԻՍՏՑ

ՁԱԽԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ. Երկայն փայտը ձեռքը. սա փաթեթովին վրայ մէկ մէկ սուրճ խմենք նէ գէշ չ'ըլլար, նէ...

ՍԱՐԳԻՍ. — Ո՛չ... աւելորդ է...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Ես չեմ ուզեր կրնաս ըսել. Փէշ-լիվանեան... ո՛չ... աւելորդ է, իրաւունք չունիս ըսելու... որովհետեւ այդպէս մեր կողմանէ ալ խօսած կը լինիս...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Էֆէրիմ, Պ. Պաղտասարեան... ինքն ձեզ ձեր առ թէքլիֆիզիոլոգիան համար կը սիրեմ... դո՛ւք, Պ. Թաթայեան... կուզէք սուրճ...

ՊԵՏՐՈՍ որ արձու մ'առած ու սեղանին մօտ նստած արձանագրութիւններ կ'ընէ. շատ շնորհակալ կը լինիմ...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Անանկ է նէ, Պ. Փէշլիվանեան, մենք խմենք ու դուք չխմէք չ'ըլլար...

ՅՈՎՍԷՓ. — Մտիկ մի ընեք անոր ըսածին Պէզի-ձեան... պահ մ'առաջ կարգուիլ չ'ուզողն ականջ-ները անկեղ խմանալով որ տունը աղջիկներ կուզան կ'երթան... Պետրոս, Յովնանեան կը խնդան. Սարգիս ամօքխառնութիւն ցոյց տալով տրոններ խածած ուղիղ Յովնանեան աչքերուն մէջ կը նայի. ի՛նչ կը նայիս... սխալ կը խօսիմ...

ՍԱՐԳԻՍ. — Անտակուրթիւննիդ ամեն տեղ պիտի ընէք վերջապէս...

ՅՈՎՍԷՓ. — Աստուծոյ սիրոյն, «ոչ»երէց ու «բայ»-ցորէց յետոյ «վերջապէս»ի մի սկսիր... այդ արդէն ուրիշէ մը լսելէ ձանձրացած ենք... Պետրոս եւ Յովնանեան կը խնդան:

ՍԱՐԳԻՍ. — Ուրեմն կեցէք...

ՅՈՎՍԷՓ. — Պիտի գանգաւորս...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Վերջապէսձիս չլսէ... միևնոյնն է... դուն սուրճ բերել պիտի տայիր... անոր նայինք...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Հա՛... իրաւ... երս եւ գրան մէջ կանգնած. Սրբուհի, Սրբուհի... սա տեղէն մեզի չորս սուրճ բեր... դրսի դրան ձայնը կը լսէ. հինգ ըրէ՛, հինգ... Պ. Նարեկեանն ալ կհաւ. կ'ելի դուքս դուր բանալու. փայտը հետ կը բանի:

ՊԵՏՐՈՍ, յանկարծ Սարգիսն կողմ դարձած. Պ. Փէշ-լիվանեան... ՍԱՐԳԻՍ. — Էֆէնտիս...

ՊԵՏՐՈՍ. — Նախորդ ամսոյն տասին տեղի ունեցած նստին մէջ ներկայացման գործերուն վերաբերեալ ձեր ըրած գիտողութիւններն ի՛նչ էին...

ՅՈՎՍԷՓ. — Երկար մի՛ ընեք, Թաթայեան, ... կարճ կապէ...

ՊԵՏՐՈՍ. Սարգիսն ի՛նչ կ'ըսէք...

ՍԱՐԳԻՍ. — Ի՛նչ պիտի ըսեմ... ընկերութեան ի նպատակ ներկայացում մ'էր... ո՛րչափ ծախսեր ըրած էինք... ինչո՞ւ խաբէր համար ասոր անոր ձրի կամ կէս գնով օթեակներ ու թիկնաթոռներ յատկացուեցան...

ՊԵՏՐՈՍ. — Ստիպեալ էինք ընելու այդ, բարեկամ... ուղղորդենք դերակատարներն իրենք ու իրենց ծընօղներն էին... հակառակ պարագային գուցէ ներկայացումը տեղի չունենար...

ՍԱՐԳԻՍ. Գիտեմ որ այդպէս է... բայց պէտք էր հասկննել անոնց որ ներկայացումն ընդհանուրի զուտութեան կը կարօտի... եթէ իրենց զուակներն երեկոյթի մը համար քանի մը օր, քանի մը ժամուան յոգնութիւն յանձն առած էին, մենք միթէ ամսաթուղաներ ունինք որ տարիէ մը ի վեր չարաչար կ'աշխատինք ծանր պատասխանատուութիւններ ստանձնած... չէ՞ մի որ անյաջողութեան ատեն վնասն ընկերութեան եւ ամօթը մեզի էր... ինչո՞ւ թոյլ գտնուեցաւ ժողովը...

ՅՈՎՍԷՓ. — Կարճ կապեղէ՛ւ պէ՛... եղած բանին վրայ ալ չեն խօսիր...

ՍԱՐԳԻՍ. — Ո՛չ... կը բողոքեմ... ուրիշ անգամ կրկնուելու չեն... կ'ընդհատեմ խօսքն անհամար զայլին:

ՏԵՍԻԼ Ժ.

ՏԻՐԱՆ Յովնանեան ետեւն սեռակներ ձեռքը, ներս կը մտնէ եւ ակնոցներուն ակնէն Սարգիսն կը նայի. տա՛ր Աստուած որ «ոչ»երդ ու «չէ»երդ բարի ըլլային

... սեռակներ կը դնէ սեղանին վրայ եւ կը նստի Յովնանեանի մոտ:

ՍԱՐԳԻՍ. — Բարի են...

ՅՈՎՍԷՓ. — Ձիվերս են... կրնաս մտիկ ընել նէ ըրէ՛, Նարեկեան... ներկայացման չ'գիտեմ ո՛ր խրնադիրներ կը յուզէ նորէն...

ՏԻՐԱՆ. — Նախ բարեւ ամենքիդ...

ԱՄԵՆՔԸ. — Աստուծոյ բարին:

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Ես ալ նախ բան մը ըսեմ...

ՄԻԻՍԵՆՆԵՐՆ. — Ըսէ՛ք...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Եթէ այս ժողովին մէջ գործերն ինչ չ'ըլլանք ու կէնէ ժողով ընելու խապեր տաք, ան ժողովին ամենքնիդ մէկտեղ գալու էք... դուք բանալէն ու գոցելէն, բարի իրիկուն ու Աստուծոյ բարին ըսելէն ալ իմ ու խեղճ կնկանս ձեռքերն ու բերանը յոգնեցան, աղբա՛ր... սա ի՛նչ է ըրածնիդ...

ՊԵՏՐՈՍ. — Կը ներէք Պ. Պէզիքեան... շա՛տ իրաւացի է ձեր գիտողութիւնը...

ՏԻՐԱՆ. — Իր ատենապետ, կը խնդրեմ ժողովէն որ իր այս նստին մէջ աշխատի ամեն ինչ կարգի գնել եւ երկրորդ նստի մը պէտքը չ'թողուլ... դուք, Պ. Պէզիքեան, շա՛տ բարի եւ ազնիւ գտնուեցաք ցարդ նկատմամբ մեր պատճառած կարգ մը անպատեհութեանց, կը յուսամ որ այս երեկոյ ալ ներողամիտ կը գտնուիք մեզ...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Պարտքս է ատ, Ատենապետ էֆէնտի... ետեւի չ'կարծէք որ նեղացած ըսի... մեզայ՛ Աստուծոյ... բերանս չէի բանար եթէ գիտնայի որ նազս շանցնիր ձեր քով:

ՏԻՐԱՆ. — Հետեւաբար, ատենը կարծեմ կրնանք բանալ...

ՍԱՐԳԻՍ. ժամացոյցը նայելով. այո՛... ժամանակը բաւական անցած է...

ՏԻՐԱՆ. Յովնանեան, ի՛նչ էր ուրեմն ձեր վէճը... տեսնելով որ կը քննալ ան ընկողմանած, ձեզի եմ Պ. Պաղտասարեան... մի՛ քննալք. բրիջներ:

ՅՈՎՍԷՓ. օտկուելով ու աչքերը սփելով: Նստած երկար յարակ պարագայ խօսքեր կ'ընէք...

ՏԻՐԱՆ. միտ ակնոցներուն ակնէն նայելով ի՛նչ խօսքեր... կը հաճե՛ք ըսել...

ՅՈՎՍԷՓ. — Կարծէք որ չ'իմացայ... բրիջներ հազար ու մէկ ձեւակերպութիւններ... կը մտնաք որ մենք հոս հինգ հոգի ենք, հինգերնիս ալ զիրար լաւ կը ճանաչենք... նորէն բրիջներ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Ան չէ եւ Պ. Պաղտասարեան... չիտակ ըսէք... քանի՞ հատ ձեւած էք...

ՅՈՎՍԷՓ. — Թաթայեան, դուն ըսէ՛ք...

ՊԵՏՐՈՍ. արձանագրութիւնը տարուակելով Տէր ողորմա... ես ձեր թէֆտերտա՛րն եմ... բրիջներ:

ՏԻՐԱՆ. — Ներողութիւն, չ'ընդունեք բուն խնդրէն. Սարգիսն. դուք ըսէ՛ք, Պ. Փէշլիվանեան... Պ. Պաղտասարեանի հետ ի՛նչ կը խօսէիք...

ՍԱՐԳԻՍ. — Խօսքս Պ. Ատենապետին հետ էր այն խնդրոյն առթիւ. որ գիտել տուի Պատ. ժողովոյդ ամսոյն տասնին կատարուած նստին մէջ...

ՊԵՏՐՈՍ. — Ո՞մանց ձրի կամ կէս գնելով յատկացուած օթեակներուն թիկնաթոռներուն համար...

ՍԱՐԳԻՍ. — Այո՛...

ՏԻՐԱՆ. — Մեզմէ աւելի մեղաւորն ձրի կամ կէս գնելով տուն ուղարկներն էին, Պ. Փէշլիվանեան... հարկ էր որ ատենը գիտնային թէ այդպէս ընկերութեան գանձէն դրամ վերցուցած ու գացած ուրախ ժամանց մը վայելած կը լինին անամօթաբար... Երբ որ մենք կ'ըսենք ու իրենք չեն ըմբռնիր, չեն զգար թէ մինչ ո՛ր աստիճան անպատուաբար է ըրածնին իրենց համար, մենք այլեւս ի՛նչ կրնանք ընել... եթէ հակառակէինք. վստահ էք որ ատենը մեր ձեռնարկը չպիտի խանդարէին...

ՍԱՐԳԻՍ. — Զգիտեմ...

ՅՈՎՍԷՓ. — Ահաւասիկ... երբոր այսպէս նեղը կը մնայ ոչերով, բայցերով, չգիտեմներով կը փակէ խնդիրն... Դու եկո՛ւր Պէզիքեանին մտիկ ըրէ՛, Փէշլիվանեան... չէնքով չնորհքով կնիկ մը, կամ աղջիկ մը ա՛ն որ բան սորվիս քիչ մը...

ՍԱՐԳԻՍ. Երկուցամ. կը խնդրեմ Տիար Ատենապետէն որ ժողովոյ նստին կարգապահութեան հսկելու բարեհաճի...

ՊԵՏՐՈՍ արձանագրութիւնը տարուակելով կը ձայնակցի Պ. Փէշլիվանեանին...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. ձեռքը վերցուցած. ես ալ... միևնոյնն է իմա ատենը բաց չէք, Պ. Պաղտասարեան... ալ քիչ մը խելօք եղի՛ր...

ՏԻՐԱՆ զանալով ծիծաղը բռնել. կ'երաշխաւորեմ որ Պ. Պաղտասարեանը ժողովոյս կարգապահութիւնը չպիտի խանդարէ այլեւս եւ ներկայացման մասին նորոգ վիճարանութիւններ աւելորդ նկատելով կ'անցնիմ կենսական խնդիրներու... Գիտե՛ք որ մեր լրջտոնաւ վարութեան շրջանը բոլորած է...

ՅՈՎՀԱՆՆԵՍ. — Տարբ օր է որ կը պոռամ ձեզի ատ...

ՏԻՐԱՆ. — Մի՛ ընդմիջէք, Պ. Պէզիքեան... Իսկ դուք, Տիար Ատենապետ, վայրկի մը թողէք արձանագրութիւննիդ եւ ուշադիր եղի՛ք ինձ...

ՊԵՏՐՈՍ. — Ուշս ձեզի է... խօսեցէ՛ք... Մի՛ կարծէք որ գրելով չեմ լսեր ձեզ...

(Շարունակելի)

ԿԵՐՈՆԱԿԱՆ-ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԷԻ

Հաստատուել 1 յունիս 1897

Հիմնադիր-Յճօրէն

Ս. ԲԻՆՐԱՏ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապարին, և Յունիս 15 սկսեալ կ'ընդունի միայն գրեթէ օթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած:

Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաև, առեւտրական աշխարհագրութիւն ու տոմարակալութիւն, գործնական մէթոտով:

Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար դիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պաղար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայ ի կիրակիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6:

ԱՄՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇՍՐԷ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԻԱԼԳ, ԳԱՀԻՐԷ

և Պալտոյ մուտքով անտի խմբուրի մոլ 60 թիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլտոյ Պապէ Գաբու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը ընկողը և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախողաց վստահութիւնը զրուտը եմանէքմի Աբրահամ էֆ. Պայթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետև Կ. Պոլտէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլտոյ զրկուելիք ամէն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին ստանձնեալ տեղերին:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿ 6 ՅՈՒԼԻՍ 1900

557	3674	549	6463	6785	2309
4207	6395	264	8183	1890	2373
725	9990	3055	6927	7287	3033
8216	4775	4762	1725	3907	2842
		8859	3708	8469	

Տպագրութիւն Ս. ԳԱՐԻՆԵԱՆ — Պաղար Մուրուր

Le gérant, J. MUNIER.